

ԽԱՐՄԻԿԱ

ՅԵՐՍՈՒԿԱՆ
ՅՈՅՆՈՐՈՒՅՅՆ

Գիկն է 10 կ. Գաւառներում 12 կ.

1911, Շաբաթ, ՄԱՐՏԻ 5 -ին.

Թիֆլիս. №10

ՕՐՄԱՆԵԱՆԻ

ՈՒՐԻԱԿԱՆԸ



Օ. Ն. Վ. Գ.

—Որ կողմը դառնաս, դարձեալ սա է ճանապարհը կտրում:
Միթէ այնքան վեղարաւորների մէջ սրանից գործունեան չկայ:

ԿԱՆՏ. ԵՍԻՒՅԵԱ



ու գիշեր անդգրի պէս թուէ՛լ գալի ու մունդ-
բէկի պէս լուսանցնում; բաս Բնչ էիք կար-
ծում, ձեր վուրդիքը ձեզմէն պակաս շուր-
քով էին, նրանք կի չէին կանա մէտի հա-
ւաքւի ու սիւի բիւի անի: Ձէր վուրդի էք-
էտ կանգնատ է. դուք իժում տէ՛հէք. «լաւ
օրիրը» Ձէր չին էկի... հէստի բանիր շանց
տամ, վուր ասիք հա՞...»

Տօ հում օթախն է կարմիր. նրանցը՞ թէ
ձերը: Նրանցը թէ մէկ-էրկու օթախն է
կարմիր, ձերը զիսկ էլ կարմիր է. օթախ-
նիրն էլ, թշիւրն էլ, աչկիւրն էլ ու վուրնե-
լի ասկիրն էլ...

Միթո՞ւմ շատ նամուսով խալիս իք ու շատ
իք բեզամաղ ըլի, վուր էս հանգի «ազգա-
յին խայտառակչութիւն» է պատահի,— դէս
ու դէն, սրա ու նրա վրայ խօսկի գուլէք
է՛ վուր շարտում իք, ուշուցի դարբանիւր
է՛ վուր դարդկում իք, բղաւում, ճղաւում...
ու մտկումը մէ լաւ ծիծաղում, էրէսանց կի
սուրփ ձեանում:

Ձէ, օչովի չիք կարա խափի, օչովի չիք
կարա քարկոծ անի, իրաւունք էլ չունիք,
էնդուր վուր միղը ձիրն է:

Տօ լաւ մարդիկ, լօքի իք ցանի ու ու-
զում իք փստա անուշ անիք. փթած կար-
տօփիլ իք ցանի ու ուզում իք վուր աղղա-
շի էն պէտլած խնձուրը քաղիք, հուղին կո-
ծախուր իք պահ տւի ու նրամէն մալիւնա
իք պահանջում. լաւ իշտահ իք ունեցի, իս
ու իմ Աստուծը:

Ձէ, չէ, ինչ որ ցանիլ իք, էն էլ հնձում
իք. ձեր վուրթկերանց պատիկ միխկը ձեր
մինձ միխկն է. ու լաւ իմացէք, վուր էսթի
աշխարհում՝ այիղ դադաստանի օրը ձեր
վուրթկերանց մագիւտը շուղաբը դուք իք
տալու, նրանց ասլիք պատիժը դիփ էլ
դուք իք քաշելու. հիմի խօս իմացաք, խօս
հասկացած. այ թէ վուրդի է էլի թուրմէ
թաղած շան գլուխը:

- էլի կուլի
- Ալի-դուլի,
- Ձէր շատ կուլի
- Ճանարադուլի.
- Ես դիփ գրից՝ Գիծ-Կակուլի



Քաղաքի գանձապահը

Քաղաքագլուխը հարցնում է գանձապահից.
—Ցոյց տուր ինձ քաղաքային անձեռնմխելի
զբանագլուխը 22 հազար բուրլին:
—Ձերդ Գերագնացութիւն, ասաց գանձապահը,
ամբողջապէս ծախուած է:
—Ի՞նչպէս, պատշաճաւոր թոյլուութեամբ...
—Ո՛չ, նախկին քաղաքագլուխը տօրիայով հաս-
տատեց, թէ անձեռնմխելի զբան աշխարհի երեսին
գոյութիւն չի կարող ունենալ, որովհետեւ ստուգելու
համար կարիք կայ ամեն տեսակ զբանի ձեռք տալ:

ԱԿԵՐԻԱԾ ՊԱՐՏԻՉ

Յուրտ, դառնաշունչ հողմերն անցան
իմ պարտիզի վրայով,
Ու պարտէզս աւերեցին
Սիրուն տնայից գրկելով:

էլ չէ լսում լուսարացին
Անոյշ երգը սխալակի,
Սիրած վարդը թառամել է,
Խորն է վէրքը երգակի:

էլ չէ ճեմում այնտեղ չքնաղ
կոյսն աննախն ու հեզիկ,
Ու երգելով ծաղիկներին
Փնջեր կապում զեղեցիկ:

էլ ինչ սրտով պիտի մտնիմ
Նախկին սիրուն իմ պարտէզ,
Ուր էլ շիւայ աղմուկ, ծիծաղ,
Ամայացել է կարծես:

Այժմ մենակ, ախուր, անբախտ,
Թափառում եմ վշտահար.
Չունիմ մէկը, որին պատեմ
իմ այս ցաւերն անհամար:

Յով-Մար



ՀԱՍՑԷ ԲԱՐԵՒԱԳԻՐՍ
ՃՆՏՐԻԿ-ՄՆՏՐԻԿ ԱԲԵՂԱՅԻՆ

Հայր սուրբ ջան.

Դուն ինձի մէ վնձ լաւութեամ էրիր իս,
Ներսէսեան գարոցի տեսուչ շինեցիր. հէչ
մտէս չի յեշնի: Հիմի հրամանքիդ լաւութե-
նի տկեց յեշնելու հմար ես ալ միտք ունիմ
քեզի Կաթուղիկոս էնելու: «Սաթարալի»
օխթը նօմբերն մէջ Գասպար աղայի յոտ-
ղներ ընկած, մուր ու լեղի կուտիս կը, օր
հալոքմ քեզի մուրազիդ հասցնէ: Լաւ իշ-
տահ ունիս. Աստուած սոնդդ բարի էնէ:
Դառնաս ճնարիկ առաջին:

Մուրազիդ հասնելու հմար քեզի քանիմ
բան հարցնիմ.

1. Գազ ու կէս լէն միրուք ունիս. շինու-
վի չըլլի, հա՞...
2. Քառասունհինգ տարեկանից էլեւի խօմ
չլիս: (մեկուսի) Բաշբորդդ սարգէ, 45 շինէ:
3. Ունիս հէչ չէ 50 հազար մանէթ, օր
գազէթածիների բերանը շինիս, անուշաց-
նիս, օր բիթուն քեզի գովին, գործը գլոխ
բերին:
4. Օխթը գոխտուրից վկայական ունիս,
օր սաղլամ ջան ունիս, ասնջու չունիս,
սրտի ծակոց մակոց չունիս, ջիգեարդ, փոր
ու փտորդ, լերթ ու թորդ սաղ սալամաթ
ին: Յանկջէդ կսիմ, դոխտուրներուն բերա-

նը լաւ անուշարու: Մի վերջնային անուշը
մանէթ խարջիս, տասը վերջնային իջիկ կը
դնիս:

5. Սասիաթը ինչդ է. սմբթ մարդ իս;
թէ միւլայիմ: Գիտիս. բազի բազի կոտո-
շով եպիսկոպոսներ հետդ կուին կը, քեզի
կոտշտին կը. թթու խօսքեր կսին կը, պի-
տի դիմանաս, վարամ չէնիս...

Աս հինգ բանը թէ ունիս, խալիս գործդ
կըջաջողի: Հա, բանմալ հրամանքիդ ըսիմ.
Թէ Աստուած յաջողեց մուրազիդ հասար,
հին միաբաններին, եպիսկոպոսներին, վար-
դապետներին, սարգաւազներին, ժամկոչ-
ներին, շաթրներին, աղչիներին... բիթու-
նին, բիթունին վանքէն դուրս կէնիս, բի-
թունին վուրդիս կը, ու դուն քեզի հմար
թազատան միաբաններ ջոկիս կը, օր յիրար
հեա անուշ բարըը եօլայ էրթան, յիրար
միս չուտին, դուն ալ արխէին ուտիս
խմիս, քէֆիդ աշիս: Հմը, քեզի խրատ տա-
լիք չըլլի, անպէս մարդիկ ջոկէ: օր յիրար
հիտ սիրով յըլլին: Չնեղեմաս. դուն քիչմ
խամ իս, խելքդ չի հասնի, եաւաշ, ես ջո-
կիմ:

1. Աւալի սֆթայ Գեօղալ-Աղարաջուն
տնտես կէնիս:
2. Սանահէր Լեոնիս ու քաւոր Սարքսին
շաթիր կէնիս. ասոնք շատ սիրով ին:
3. Կրկանչիս Մամիբէլին, Երւանդին, Ար-
սէնին, Եղնիկին, Ամիրխանեանցին, Փար-
մասօն Յակոբին, ատոնց բիթունին եպիս-
կոպոս կօծիս ու մէ կոնդակ մալ կու-
տաս թէ «Գնացէք Լուսաւորչական եկեղե-
ցին վերանորոգեցէք»:

Անպէս վերանորոգին օր քէֆդ գայ:—
Արթը յաչլեբերս լիյս: Կրկանչիս գիտնական
Լէօին, Առաքելովին, Թուամանեանցին, Շիր-
վանցուն, Մալխանեանցին, Հովիտի խմբա-
գրին, Հորիզոնի խմբագրին: Ասոնք համ
գիտնական մարդ ին, համ էլ յիրար հիտ
շատ սիրով ին: Բիթունին եղոտ գործի
դնիս կը: Մէ տարւայ մէջ էջմիածինը,
վանքը, ձեմարանը դրախտ շինին կը: Հա,
հայր սուրբ ջան, չունքի իմ ոտը շատ գի-
տէ, քան քու գլոխը, քեզի հօր խրատ մալ
տամ: Դուն շատ բանի յետե չպիտի յընկ-
նիս, ինչ կսին յանկաջ պիտի էնիս: Համ-
բարձում աղան կըսէ, մաժոնըր սեւ է, դուն
պիտի ըսիս, հրամանքես, սեւ է: Լէօն կըսէ
մաժոնըր դեղին է, դուն պիտի ըսիս, հրա-
մանքես, դեղին է: Հարնախաս, դուն դառ-
նաս կը բոստան ղողխուսի (խրտեկալի):
Գիտիս ինչ է բոստան գողխուսին: Գեղա-
ցիք դուրը ցորեն օր փոխի կը, չորցնելու
հմար, ցորենի կոխքին սըրղմ տնիլին կը,
գլոխն ալ փափախմ դնեն կը օր ճնճիները,
հաւելը գիտեման թէ աս սըրղը մարդ է,
վախենան, ցորենը չուտին:

Դէ մնաս բարով, հայր սուրբ, ինձի մտե-
հան չէնիս. վեհարանիդ կողքին մէ խա-
նութ մալ ինձի հմար սարգիր: Ես ալ գլլիմ
վանքի դալայչի:

Սուրբ յաչիդ ծառայ՝
Ղալայի Մարգար

ՌՕՏԵՐ

ՅԵՐԱՅԱՅԱՆ
ՆՈՅՆԻՍԻԱՆ



—Եղբայր, բաւական է... Խնչ վարժապետ,
Խնչ բան, հերիք է է... առաջայ նման, ոչ եկեղե-
ցում շարական են ասում, ոչ Թատրոնում են խա-
ղում, ոչ գպրոցը մաքրելուն են նայում... էլ Խնչա-
ցու են դրանք ախր...

—Ես իմ հոգին, դրուստ է ասում, Մարտիրոս
Գողոսիչը...

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Բ Ա Ր Գ Ե Ր Ի Ց



ՌՕՏԵՐ

—Էս ինչ է, քա, զիզի-պիզի բաներով իս ու-
զում սիրոս շահի... այ, դոխտուրի հանգի վնա



ՌՕՏԵՐ

—Տճ, քօփակ, բա դու չիս ամաչում էդ սիպ-
տակ մազերից, վուր օրը ցերեկով Կէկէլի տունն
իս ննգնում...

Ի՞նչ օրի ենք

ՀԱՆՏԻՊՆԻ ՄԵՆՔ

Փողը շատ է՝
Տառող չկայ,
Պատաւ աղջիկ
Ուզող չկայ,
Բրդոտ ոչխար
Մուգող չկայ,
Ի՞նչ օրի ենք
Հանդիպել մենք:

Մարդ ու կնգայ
Մէջ սէր չկայ,
Հայ դպրոցին
Մի տէր չկայ,
Ժամը կայ, բայց
Տէր-տէր չկայ,
Ի՞նչ օրի ենք
Հանդիպել մենք:

Վարժապետ կայ,
Բայց փող չկայ,
Դպրոցը փակ՝
Բացող չկայ,
Մեր էս դարդին
Հացող չկայ,
Ի՞նչ օրի ենք
Հանդիպել մենք:

Գիւղը փոխեց՝
Քաղաք դառաւ,
Կոշտը փոխեց
Կաւորը դառաւ,
սէկատսիրԱ-ն
Աշուղ դառաւ,
Ի՞նչ օրի ենք
Հանդիպել մենք:

սէկատսիրԱ



ԳԱՌՈՒՆԳԻՏՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՕՐԷՆՔՈՎ

I. Մի օր Տանձտուժ Հէքիմնց Յակոբի փոքրիկ երեք տարեկան երեխան ձեռքը կոխել էր գաւի բերանից ներս և էլ դուրս չէր գալիս: Երեխան լաց էր լինում, մայրը կսկծից անվերջ հառաչում և տանջւում էր, որ երեխայի ձեռքը դուրս բերէ գաւից, բայց հնար չէր գտնում:

Սրանց ձայնի վրայ եկան հաւաքեցան դրացի պառուհիները, որոնք չկարողացան մի այնպիսի խորհուրդ տալ, որ հնարաւոր լինէր երեխայի ձեռքը դուրս բերել գաւի նեղ բզից: Պառուհիներից մէկը երկայն մտածելուց յետոյ, ասաց.

— Ի՞նչ էք կանգնել, մտածում, Գնացէք

Առաքել ափարին կանչեցէք, թող գայ ճարը գանի:

Եկաւ Առաքել ափարը, գլուխը շարժեց բազմախորհուրդ կերպով, մի քանի փորձ արաւ երեխայի ձեռքը գաւից հանելու, բայց ճար չգտաւ և վերջապէս հեղինակաւոր ձայնով ասաց.

— Ուրիշ ճար չկայ, պէտք է թեւ կտրել, թէ չէ երեխան կը մեռնի:

— Վայ հողը գլխիս, ասաց երեխայի մայրը, աղան կոնստա պիտի թողնէք: Ես չեմ թողնի ձեռքը կտրելու:

— Թող այն ժամանակ երեխադ մեռնի, ասաց Առաքել ափարը ու պատրաստեց դուրս գնալու:

— Յետոյ երեխայիս կտրած ձեռքը գաւի մէջ պիտի մնայ, ասաց թշառ մայրը ողբազին:

— Ի՞նչի կը մնայ գաւի մէջ, ասաց Առաքել ափարը:— Թեւ կտրելուց յետոյ գաւը կը կոտրենք ու կը հանենք:

II. Տանձտոցի Մաթոսը դաշտում մի խուրճ խոտ էր գնել և ուզում էր տուն տանել: Բայց ինչպէս. նա չէր ուզում, որ խուրճը քանդի, նորից երկու մասի բաժանի և ջուրու վրայ գցի, որովհետև ափսոսում էր խոտի փշանալուց: Եւ այս ու այն կողմ նայելով խուրճի ծանրութեամբ քար որոնելուց յոգնեց նա. դաշտում այնպիսի մի բան չկար, որ հաւասարակշիռ լինէր խուրճին: Վերջ ի վերջոյ նա ոչինչ չգտաւ:

Երեխան որ կանգնած էր հօր մօտ և նրան էր նայում ածիսաբեր՝ ասաց.

— Շուտ արա, գնանք, ապի, կովը սոված է:

— Հա, լաւ ասիր, բայիկ...

Ու գիւղացին երեխային վերցնելով հակ շինեց, թոկերով կապեց և խուրճի հետ գցեց ջուրու վրայ և ուրախ իր գիւտի յաջողութեամբ՝ գիմեց դէպի տուն:

Հ. Գ. Գար

բովհետև ես մի անգամ կէս քնած ու կէս արթուն՝ օդի մէջ տեսայ մի հրեշտակ, ձեռքերն օր գրում էր թէ՛ «այդ փոփոխութիւններն անաջ են գալիս ֆիզիքային 13-րդ դէպքի գամաձայն»:

Օրինակ, Գասպար Կալատուզովը փոխեց—գնաց Մոսկու, Բախճուն և Կլան Յակովբը «Բիրաուր» և «Քամու» խմբագիրների փոխեցին, իսկ միանոց «Պաթաբալային» փոխեցին պիկի երեքանոցի, իրանց նոր լրագրներն էլ փաթաթելով խեղճի վզովը:

Եթէ Գասպար Կալատուզովը մի երկու շաբաթ էլ ուշանայ, ով գիտէ ես էլ ու փիլիսոփայագէտ Ֆոն-Ստեֆենսոնն էլ «Բիրաուրուր» և «Հողմի» խմբագրների փոխեցնք: Ահա այս բոլորն անաջ են եկել և յետ գնացել ֆիզիքային վերոյիշեալ օրէնքի համաձայն, որը ասւած է նոյնպէս և Մակար Չմշկեանի օրացոյցի վերջին երեսում:

Հրագիրը գրողն այսօր մածոնի սպիտակ կասի, իսկ վաղը կը փոխի ասածը ու սև կասի, նայած թէ քամին ու հողմը որ կողմից կը փչին:

Այսօր գրպանդ հայհոյանքներով կը ցնեն, իսկ վաղը ծոցերդ օրհնութիւններով, նայած թէ օդի հոսանքը որ կողմից կը սուսի: Սրանք էլ անաջ են գալիս ֆիզիքային օրէնքով, ինչպէս անաջ է գալիս և այն, որ քաղաքային վարչութիւնը շաբաթը 25 անգամ փոփոխում է հացի ու մի սակագիրը և ամիսը 13 անգամ անհետևանք տուգանում տրամալի վարչութեանը:

Բայց թէ ֆիզիքային վերոյիշեալ օրէնքից զարմանալի կերպով բացառութիւն է կազմում Հրատարակչական ընկերութիւնը, որը ինչպէս ծնւեց այնպէս էլ անփոփոխ ապրեց և գուցէ անփոփոխ էլ գերեզման իջնի, որովհետև քննադատի բացիլները շատ են անհանգստացնում նրան:

Նա որ ծնւեց, ամեն կողմից էլ աչքալիսէքի եկան և ամենքն էլ կարծում էին, որ այդ մանուկը մեծ ապագայ է խոստանում: Երեկայիս մանուկ Հրատարակչականը մի տարեկան է և դեռ չորեքթաթի է տալիս: Երբ լեզուն բաց լինի և ոտի կանգնի, մտադիր է մի գիրք հրատարակել:

Դրա համար նա դիմել է քաղաքային վարչութեան գլխաւոր հաշտապահին, որպէսզի նա իր նոր սովորած կրկնակի հաշտապահութեամբ իմանայ թէ գրքի մի երեսում քանի՞ տող կը լինի և թէ ամբողջ գրքում քանի՞ մեծ և փոքր տառեր կը տեղադրուին:

Այդ հաշիւն անելուց յետոյ կը սկսուի տըպարանի հետ բանակցութիւնը, իսկ գրանից յետոյ գրքի տպագրութիւնը, եթէ միայն քննադատ հրեւանդութեան աստիճանը յաւելման նշաններ չցոյց տայ:

Ի հարկէ դեռ դա երկար կը քաշի և մենք պէտք է սպասենք, որովհետև մանուկ իայտարակչականը դեռ չորեքթաթի է տալիս և լեզուն դեռ չի բաց եղել: Յոյս կայ սպասածից շուտ լինի, որովհետև մանկան դայակը շատ զգուշութեամբ է սրտում նրան: Ամեն բան աշխարհիս երեսին ինչպէս որ

փոփոխուում է, դարձեալ Ֆիզիքայի 38-րդ յօդաձի համաձայն, ծնւում և մեռնում է, ինչպէս որ «Կայծեր»-ը:

Սեղճը ծնւեց կոպէկանոց, ապրեցաւ—հասաւ երկու կոպէկի և դեռ հինգ կոպէկին շարժանացած, անգութ մահը նրան խլեց մեզանից և խեղճը երիտասարդ հասակում սառն գերեզման իջաւ:

Լուսամոզին պատիկ էր, բայց ճատիկ էր և կոտորած զբալի պէս մեծերի հետ մէյդան էր դուրս գալիս:

Հանգիստ ոսկերացդ անհանգիստ երիտասարդ:

«Մշակն» էլ մի ժամանակ երկունքի մէջ էր և ուզում էր ծնել մի ընկերութիւն, որը հայ ուսուցչին օգնութեան հասնէր պառկած ու քնած ժամանակ: Բայց թէ անժամանակ վիժեց և ծնողին դեռ լոյս աշխարհը չցոյց տւած, փչացրեց:

Ֆիզիքայի վերոյիշեալ օրէնքին իբրև բացառութիւն կազմում են կեղծիքը, սուտը, բանբասանքը, հայհոյանքը, նախանձը... որոնք ծնւել են և ապրում են հայերէն սև տառերով գրւած արշինանոց թերթերի վերայ և երկար ժամանակ չեն մեռնիլ, մինչև որ չլնջի Ֆիզիքայի այդ շարագուշակ օրէնքը:

Փարեմուզ



Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Ք Ա Բ Ա Ջ

ՃՆԴՐԻԿ ԱԲԵՂԱՅԻ

Խօսեցեալ Կ. կիրակէի մեծի պահոց

Աստուածասէր ժողովուրդ!

Այսօր տօնն է Անառակ գաւակին:—Հարուստ ազա ոմն ունէր զերկու գաւակ, որոյ փոքրն էր՝ չար, հայհոյիչ, անպիտան, վատնող. սա բռնութեամբ առեալ իւրեան հասանիլ ժողովութիւնն հօրէն, գնաց օտար աշխարհ, ընկերացեալ «փուչ-կենդանի» արարածոց, լափեաց-վատնեաց ամենայն ինչ և մտեալ հացափոր խոզարած, գիշերէր քաղցած փորով ընդ խոխոսան խողըս: Անգամ մի քաղցածութիւնն խիստ զօտ արեալ, յոյժ սրտնեղեցաւ և զղջացեալ, դարձաւ առ Հայրն և գոչէ. «Հայր, մեղանյ յերկինս և առաջի քո, ընդունեա զիս ոչ որպէս զորդին քո, այլ որպէս ծառայ մի և ես ուրախ եղիցիմ, զի կուշտ փորով հաց

Բանկի գանձապահը

Քննիչը հարցնում է բանկի փողերը իւրացնող գանձապահին.

—Ո՞րտեղ է առձեռն մնացորդ 50,000 ռուբլի դրամագլուխը.

—Ասացէք ինզրեմ, պ. քննիչ, որտեղից գիտէք, թէ առձեռն դրամագլխից մնացել է 50,000 ռուբլի:

—Ձեր հրատարակած այս վերջին հաշիւից, ասաց քննիչը մտառ հաշիւեցուցակի վրայ գնելով:

—Մինչև որ չասէք, թէ որտեղ և երբ է հրատարակած այդ հաշիւը, ես ձեզ չեմ պատասխանի, թէ որքան դրամ է մնացել և որտեղ են այդ փողերը:

ՄԻԱՄԻՏ ԳԻԻՂԱՅԻՆ ԵՒ ԻՐ ԵՇԸ

(Ժողովրդական)

Մի գիւղացի էշն ետեից պցած, սանձը ձեռին՝ շուկայից վերադառնում է տուն: Ճանապարհին երկու գող՝ տեսնելով գիւղացուն անհող կերպով գնալիս՝ վճռում են էշը գողանալ:

Գողերից մէկը զգուշութեամբ էշի վզից հանում է սանձը, անցկացնում իր գլխին և հետևում է գիւղացուն, մինչև որ հասնում է մի աղբիւրի և ուզում է էշը շրել, բայց տեսնելով, որ էշի փոխարէն թոկի ծայրը կապած է մարդու վզից՝ տեղնուտեղը քարանում է: Եւ մինչև ինքը շփոթւած խօսք չէ գտնում արտասանելու, իշամարդը խղճալի ձայնով ասում է նրան.

—Տէր, մի տարակուսիք դրութեանս վերայ. նախքան իմ էշ լինելս՝ ես էլ քեզպէս ընտանիքի մարդ էի, բայց Աստուած մի ծանր յանցանքիս պատճառով պատժելու համար ինձ էշ դարձրեց, որ ահա երկար տարիներ ամենայն խոնարհութեամբ ծա-

կերիցեմ: Հայրն չէր խտտախրտ, ներեաց գնա, փաթաթեցաւ, համբուրեցաւ և ընկալաւ: Անառակն ուղղեցաւ:

Տէրն մեր Յիսուսի Բրիտանոսի իմաստալից առակն այս օրինակ է վասն մեր, սիրելի ժողովուրդ: Ի՞ միջի մեր ևս կան բազումք, որք ձանձրացեալ խաղաղ և բարւոք կեանքէն, առնեն զբաժինս իւրեանց, գնան խառնին ընդ «փուչ-կենդանիս», վատնեն և կորուսանեն ամենայն ինչ՝ խաշտառակ ու վարկարեկ եղեալ և թէև զգան սխալն իւրեանց, սակայն կողքէնստուծեամբ (որ է յամառութեամբ), ոչ խոստովանին և դարձի եկեալ գոչեն. «Հայր, մեղանյ յերկինս և առաջի Քո», և, շարունակելով սխալ ընթացք իւրեանց, ի կորուստ մասնեն զանձինս իւրեանց և թշտանան յոյժ:

Օրինակս այս ոչ պատշաճի Մեսրոպայ ս. Մագիստրոսապետին, որ անւանի էր ի մէջ միտաբանութեան ս. Էջմիածնի և ամենեքեանք պարծէին անւամբ նորա, սակայն մեծամտեցաւ յանձինս իւր և առաջի «փորձչին» արհամարհեաց զխորագէտնախորդքն, անւանելով նոցա տղէտք, քանզի հակառակեցան միացմանն Հայաստանեայց Առաքե-

ւայում եմ քեզ. իսկ նշանակելով «Էրեցաւ իմ քառութեանս ընդհն» «Երկուցիցն» մութիւնն ինձ կրկին իմ նախկին մարդկային պատկերս վերադարձրեց. բարի եղիր և արձակիր ինձ այս անարգ կապանքից ու վերադարձրու ինձ իմ ընտանիքիս...

Միամիտ գիւղացին ամենայն բարեսրտութեամբ իշամարդի վզից բաց է անում թոկը և առանց կասկածանքի արձակում նրան:

Միւս օրը գիւղացին գնում է շուկայ էշ գնելու. բայց երբ տեսնում է այնտեղ իր էշը ծախու հանած՝ զարմացած մօտենում է նրան ու ցածր ձայնով ասում էշի ականջին.

—Արդեօք ո՞ր մեղքերիդ համար դու այդպէս դարձեալ էշ դարձար...

Խարեհու

ԽՈՂԱՄՈՒՆԵՐԻ ՊԵՂԱՏԵՆՔԸ

(Նւէր բոլոր դուժարագներին)

Ո՛վ թուղթ սրբազան, դո՛ւ կարտ կոչեցեալ,

Թղթամոնլների վսեմ իղէսալ...

Որպէս կուտքի մ՛ը, ճիշտ նաւատացեալ, Ես քե՛զ յախտեան կա՛մ սպաւինեալ:

Լե՛ր դուն օգնական՝ նաւատ ծառայիդ, Տո՛ւր ինձ բախտ՝ հայիւ, միայն քո՛ ղէմքիդ, Եւ հօքորութիւն մտաւոր ուժիս...

Որ ես ցանկացած ձեւը տամ կարտիս:

Եւ ուր որ ընկնիմ՝ առջեւդ, ինդրելու

լական ս. Եկեղեցւոյն ընդ այլ քրիստոնէական եկեղեցիսն. և այսու անմիտ հաճոյախօսութեամբն իւր ընդ «փորձչին», փորեաց գերեզմանն իւր առաջի ժողովրդեանն: Յետ այսու, «ոչ տեսանես զճգիպտոս և կաթողիկոսական Աթոռն»: Սակայն եթէ զղջալ ի սրտէ և բացարձակ դիմէ առ ազգն իւր գոչելով. «Հայր, մեղանյ յերկինս և առաջի Քո, զալաթ մի սրարեալ եմ, մեղանյ», թերևս ազգն ըստ հերթին գոչէ. «Եկ, որդեակ իմ, կորուսեալ էիր և գտնւեցար, մեռեալ էիր և յարեար»: Ազօթեցէք ամենեքեանքդ, զի դարձի գայցէ մոլորեալն. ամէն:

Էր Լէօ մի, ամբակուռ բազուկ «Մշակ» լրագրոյն, որոյ շնորհիւն ի թէլըրաֆչիուծիւնէն հասաւ կոչմանն «պատմաբանի»: ամենեքեանքն գովէին, մեծարէին և պնտնն նորա հուշակեցաւ յեկից արևու մինչ ի մուտս: Օր մի, յորժամ շնորհիւ դուրջուրական բայկօտին և այլ հանգամանաց նիւթական կրիզիս կրեաց «Մշակն», Լէօն կանգնեաց ոտքն ամուր զարկեաց գետնին և մեծ գուժար պահանջեաց, յուսալով քանզի բազում մուլի մշակականք թողին զՄշակն լքեալ, արդ իրաւատէրքն նորա որպիսի

«Սրբազան» ուխտով, խպղեր սարքելու, Տո՛ւր յաջողութիւն անվերջ տանելու, Եւ մեծ գումարներ՝ միշտ գրպանելու:

Եւ ինձ մի՛ տանիր դաժան փորձանքի, Կամ թէ՛ տարելու դառն տանջանքի, Իսկ ախոյեանիս տո՛ւր խիստ թուլութիւն, Որ ընդմիշտ ցրէ՛ մե՛ծ հարստութիւն:

Քառու



Մ Ա Ն Բ Ա Ի Ն Ք

Ա Ղ Է Ա Ր

Աղւէսը եթէ գիտենար, որ իրեն նրա համար են որսում, որ իր մորթին թանգ արժէ և գեղեցկուհիների վզի զարդն է, ինքը ուրախութեամբ կըզար և կենդանի կը փաթթէր նրանց վզովը:

Մարդիկ և կենդանիները

Մարդիկ քանի կենդանի են՝ մի բան արժեն կամ ոչինչ չարժեն. իսկ մեռնելուց յետոյ ամենաանպէտքն են. բայց վայրի գազաններն ու կենդանիներն ընդհակառակը, սպանելուց յետոյ նրանք պիտանի են լինում և շատերը նոյն իսկ թանգ արժեն:


«Անպէտք մարդը»

Մէկը դիմում է մի աւազակային խմբի և գործ խնդրում: Աւազակապետը հարցնում է նրան.

դնով և իցէ՛՛ ո՛չ թողուն զինքն հեռանալ «Մշակ»-էն և կատարեսցին դամենայն պահանջն նորա: Սակայն «նամն մեռիցէ Հաջի-Բարային», ո՛չ սասանեցաւ և քանզի «կեսուրն մեռցի, տեղն լայնասցի», դռներն ջուխտ բացաւ առաջի նորա: Լէօն գնացեալ դուրս, ո՛չ զլացաւ խառնիլ ընդ «ո՛չ ու փուլքն» այնոքին, որոց ինքն հրբեմն կոչէր «հնիչէրիք»: Եւ եղև երեկոյ և եղև առաւօտ և ահա Լէօն եղև խմբազիր հակառակորդ բանակի, յերորդում աւուր նորընկերքն վասն «մշակական հոգով» զրեալ մի յօգւածին — զնա դուրս վռնդեցին՝ յայտարարելով ըէակցիօնէր. յետ վից ամսոյն՝ նորից ընդունեցին՝ այնու պայմանաւ, զի անունն նորա տպեցի ի շարս խմբազրաց «Հորիզոնին», սակայն նա ունի իրաւունս միմիայն հայհոյանք թափել ի վերայ «Մշակին» և այլ ինչ ո՛չ զրել. նա լցեալ յոյժ սանկուլեմամբ առ «Մշակն», այն աստիճան մուլեզնեցաւ, զի վասն վարկաբեկման նորա, սկսաւ «բաղարնայա» կոչել զնա և նոյն իսկ ինքզինք հայհոյիլ, պատմական մեծահատոր գրւածքն իւր յայտարարելով սուտ, սխալ և կոշուհն իւր պատմարանի խօ-

- Դուք նոր ձեր հրացան ունիք:
- Ունիմ:
- Ատրճանակ:
- Ունիմ:
- Փամփուշտներ:
- Ունիմ:
- Դաշոյն:
- Ունիմ:
- Մարդ կարող էս սպանել առանց խրդճահարելու:
- Ո՛չ:
- Գողութիւն կարող էս անել:
- Ո՛չ:
- Հրդեհել կարող էս:
- Ո՛չ:
- Լրտեսել:
- Ո՛չ:
- Հապա այդ գեղեցիկ զէնքերովդ ի՞նչ էիր անում:
- Գազաններ էի սպանում:
- Դուք մեր խմբի կազմի համար անպէտք էք:

Մ. Աղայեան



Յոռետեսք

— Մարդ չի հասկանում, թէ ինչքան են կատարում մեր աշխարհում: Պետակները գործարարները զարմուտ են. աջ ու ձախ...
 — Կէ՛ն, դու կըսով չափ մեծացնում ես եղելութիւնները.
 — Ե՞ս, ես...
 — Այո՛, միմիայն աջ են շարտում:

Մորացկանը

— Պարոն, խնդրեմ բարի եղէք և զիշերելու համար ինձ տասը կոպէկ տէք, ասաց մուրացիկը:
 — Ահա քեզ ութ կոպէկ, ասաց պարոնը զրպանը Երկար խառնելուց և ութ կոպէկ դուրս հանելուց յետոյ, սրանով եօլս դնա՛, էլ աւելի չո՛ւնեմ:
 — Պարոն, ինչ ժլատ էք, ասաց մուրացկանը, ամօթ չէ՛: Ախր ո՛չ դու ֆինանսների միմիայն ես, ո՛չ էլ ես լուսաւորութեան, որ զիշերելու հարից անգամ կարում ես:

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՕՐԻՉՄՆԵՐ

(Վ. Շէքսպիրից)

Լսիր ամենին, խօսիր քչերի հետ:

Սիրիբ բոլորին, հաւատան քչերին:

Կուրց խուսափիր, իսկ կուր լռուելով՝ քեզ այնպէս պահիր, որ հակառակորդ վախենայ:

Թէ որում ես ցտնել՝ հացի չսպասես:

Եթէ քեզ վիճակած է որս գտնալ՝ ա-

թեաց ի մէջ ցեխի: Աղօթենք, սիրելի ժողովուրդ, զի օր մի դարձի եկեցէ սիրելի Լէօն մեր և գոչէ. «Հայր, միղա՛յ յերկինս» և կրկին դարձցի և բազմեցէ աթոռն փառաց ի մէջ խմբազրատանն «Մշակի», որ այժմ «Բաղարնայա» չի, այլ «Սօլուախակայա»: Գիտեմք, զի Հայր-Աղան և բազմաչարչար Վանօս արտնջան, նման անառակի մեծ եղբորն, թէ «Հայրն, միք հնազանդ էաք և գործէաք եռանդուն և դու ուլ մի ո՛չ հտուր մեզ, զի խրախճան կազմեալ՝ քէֆ-անենք ընդ թայր-թուշից (ընկերակցաց) մեր և փոքր որդին քո, որ գնաց խառնեցաւ ընդ «ո՛չ ու փուլք»-ս, այսօր մեծ եզն զոհարեբես և ուրախութիւն մեծ կաղմես... Ժողովուրդն նման բարի Հօր, ասէ ցնոսա քաղցրութեամբ. «Լուցեք, որդեակք, եղբայրն ձեր մեռեալ էր և յարեաւ, կորեալ էր և գտանեցաւ... իսկ Սօլա-Քեալանթարն բռնեալ ձեռքն Գ. Բաշինջաղեանի և ազգային սև Սանդրօի՝ «չալախօ» պարեն և ցնծութեամբ համբուրեն ամօթէն կարմրեալ թուշքն Լէօնին: Եւ ես, սիրելի ժողովուրդ, քանզի յոյժ սիրեմ զԼէօն, ո՛չ զլանամ ձրի պահպանիչ մի ասել:

է ոմն հրապարակախօս Յ. Գինջեան կուրցեալ, որ ի մէջ «Մշակին» ծուռն գծերօք և դժգոյն ներկօք գծեալ է LXXXVI «գծեր և ներկեր», բոլորն հաւաքեալ հազիւ քանի մի երես, սակայն նա մեծամտեալ ինքզինքն հոչակէ հրապարակախօս-պուրլիցիստ անուանի. աղօթենք, զի նա ևս դարձի եկեցէ և գիտակցեցէ, զի զօրով ինքզինքն անուանի հրապարակախօս ո՛չ կարէ դարձնել — ամէն:

է անուանի վիպասան մի, Շիրվանզադէ. ամենեքեան հոճէին, զի յետ Բաֆֆուն, տեղն նորա ո՛չ մնաց դատարկ և ոգևորութեամբ կարդային վէպքն նորա: Սակայն տասը սարին անգամ մի — ո՛չ գիտեմք չի՞նչ քամի փչէ խելքին նորա, թողցէ ոսկեզէնիկ գրիչն իւր և վէպքն անմաման և զրադի պոլեմիկայի, որով նման «կարմիր կոլու» գիծ մի քաշէ ի վերայ անմաման գրւածոց իւր: Այժմ ևս նոյն քամին մտեալ է ի գլուխն: Աղօթենք, սիրելի ժողովուրդ, ափսոս է Շիրվան մեր, ելցէ քամին ի գլխէն, թողցէ պօլիմիկան և դարձցի առ ոսկեզէնիկ գրիչն իւր, գոչելով «Հայր մեղա՛»... և տայ մեզ գեղեցկահիւս վէպք և պատկերք:

ւելի լաւ է առիւծի ձեռքից ընկնես, քան թէ գալլի:

Այնտեղ, ուր բոլորը հաւասարապէս մեղաւոր են՝ ոչ ոք մեղաւոր չէ:

Շատ անգամ դառն ճշմարտութիւնն իմանալու երկիւղը լինում է աւելի չարատանջ, քան նոյն իսկ դառն իրականութիւնը:

Օգուիր ներկայով՝ քո ապագայ բախտաւորութիւնն ապահովելու համար:

Բարեմիտ կասկածը իմաստունի փարոսն է, չարիքը մինչև խորքերն հետախուզող զննաձողը:

Պեղճ իմաստութիւնը՝ շատ յաճախ՝ հարուստ յիմարութեան ձորան է լինում:

Վ. Բարուհան




Գիմնագիտար

Հարուստ վաճառականի թաղման հանդէսն էր կատարում և հոժ բազմութիւն էր ժողովել, իսկ նրա գիմնագիտարը խորապատկած կարգում էր մի դիւրք, որը իր հաստութեամբ աղօթագրէ էր նմանում:

—Պեղճ երեխայ,—ասում էին հանդիսականները—հօր հողու փրկութեան համար աղօթք է կարգում: Այդ միջոցին հանդիսականներից մէկը հետաքրքրելով մտեցաւ և նայեց, տեսաւ, որ նա կարգում է ժառանգութեանը վերաբերեալ յօդածները:


Դժարալուծ հարց

- 1. վաճառական.—Ի՞նչ ես այդպէս մտածում երբ նայում խնտութիւց ցուցանակին (ВЫВѢСКА):
- 2. վաճառական.—Մտածում եմ, թէ ցուցանակի որ տեղը «ВЫВШІЙ» բառը գրել տամ:



Դպրոցում

Քաղաքային դպրոցի կրօնուսույցը դասի ժամանակ հարցնում է աշակերտին.
 —Աղամբ ձրտեղ ծնւեցո:
 —Դրախտում, պատասխանում է աշակերտը:



ԱՍԷ-ԿՕՅԷԷԲԻՅԵՅՅՅՅ

Տ. Աննան արդուզտրիք սեղանի մասով նստած երեսին ներկ ու պուզը էր քսում:

—Այդ ի՞նչ ես անում, մայրիկ, հարցրեց մօտենալով նրան՝ իր 5 տարեկան աղջիկը:

—Ձեռ տեսնում եմ ինչ եմ անում, պուզը եմ քսում:

—Մայրիկ ձան, քից տուր ես էլ քսեմ:

—Դու չես ուզիլ, անուշիկս, դեռ փոքր ես, որ մեծանաս, այն ժամանակ կըքսես:

—Բայց ինչո՞ւ համար պէտք է քսեմ, մայրիկ:

—Սիրունանալու:

—Տէ, ցէ, ես ցեմ քսիլ պուզը, ես սիրուն եմ. Իլիկոն ասաց «դու սատ սիրուն ես, մայրիկն էլ է սատ սիրուն». ասաց ու համբուլեց ինձ: Հը՛, մայրիկ, որ սիրուն ես, ինչո՞ւ ես պուզը քսում:

—Ի՛նչ լաւ, հեռացիր, դնա, խաղա դուրսը:

—Ինչո՞ւ ես տխուր, աղջիկս, ի՞նչ վիշտ ունիս, հարցրեց մայրը՝ իր աղջկան, որը պատուհանի առջ տխուր նստած, այտով ձեռքի վրայ յիււած, թախծոտ հայեացքը հեռուն ուղղած, կրքին-կրքին հառաչում էր:

—Սէր եմ ուզում, մայրիկ, սէր, պատասխանեց օրիորդը, աղբսական հայեացք ձգելով մօր վրայ:

—Այդպէս սաս, էլի, էլ ինչո՞ւ ես տանջւում, սասց մայրը և մի տեղից մի աման սնր բերելով, առաջարկեց օրիորդին:

—Ա՛խ, սա չէ իմ ուզածը, մայրիկ, է-ով եմ ուզում, է-ով...

Յով-Մար

ամէն: Էր լուսնի մի Յովհաննէս Թումանեան, կոչմամբ բանաստեղծ և քանդի այդմ կոչում ոչ տայ կտոր մի հաց զմանրումը-ժուր գաւակաց նորա, սրտմտեցաւ և ոչ կամեցեալ խնամք գաւակացն յանձնել այլոց, ահամայ գնաց-ընկերացաւ «ոչ ու փուչ»-ից և եղև ուստարաշին նոցա և բունի վտարեալ մուսայքն իւր, գօտով քաշեալ դէժօն, գՇիրվանն, գԱղասարեան բժշկապետն և բազումք, ինքն առեալ աբուռն, սուսիկ փուսիկ ծլկիցաւ կրկէսէն, ի մտաց կրկնելով զիւտն... Շիրվանի բերեալ ի Փրանգստանէն և թողլով նոցա միմեանց ուրի կոճոտել և վարկաբեկիլ զմիմիանս: Աղօթենք, զի Յովհաննէսն մեր ևս դարձի եկեացէ և գոչէ «Հայր, մեզայ յերկինս» ամէն:

Ամենակարողն Աստուած դարձի բերեացէ և զհետեւեալ ոչխարքն իւր մոլորեալը— Հ. Պ. Ս. Վեղարբէգիանն, զի յետ այսու ոչ արհամարհեացէ հրամանն Հայրապետական և պատկերն սիրելոյն մեր Պրիտափօրի ոչ զնել տայցէ ի մէջ եկեղեցոյն Արդւինայ. մենք ոչ լինիմք դէմ գաղտնա-

ծածուկ մտածմանցն «Հօրիզոնականաց, բազմացուցանիլ զնա գահն Հայրապետական, սակայն երկնչիմք, զի յորժամ բարձրացցի ի գահն Հայրապետական, նման Նարուզդոնոսոր արքայի, հրամայէ պատկերն իւր զնիլ ի մէջ բոլոր եկեղեցեաց:

Բժշկի Աղասարեան, քանզի մասնագիտութիւնն նորա ոչ է «հոգեբոյժ» և «մեծամտաբոյժ», յետ այսու ոչ քննադատեացէ զանւանի ազգային հեղինակս:

Ոմն ոմնի Գ. Երեցեան—մանկամտաբար յետ այսու ոչ խաղացցէ ընդ «Կայծերին» կրակոյ, զի մատուցն իւր միայն այրեացէ: Մամոսնի Չէրքէգեան—«Արա խէ աս լուր»... Օրմանեանականութեան կուրսն նորա օր աուր բարձրանայ. ոչ եմ դէմ զանւանի խոշտանգեալն մեր սրբազան Օրմանեան զնիլ երկրորդ կանդիտատ կաթողիկոսութեան—եթէ համաձայնին Չէրքէգեանքն առաջին կանդիտատն զնիլ զնւաստ ծնգրիկ արեղայս: Աղօթենք զի լուսաւորեսցի միտքն նոցա և աւելի լաւ պաշտպանեացն զանմեղս:

Հրատարակչական ընկերութեանն—Թողցէ քնարութիւնն իւր և գործ կատարեացէ:


Ազգային լրագրաց Կովկասու: Քանզի ամառն զանարժան ընտրելիքն իւրեանց վասն գահին Հայրապետութեան յայտ առնել—զի ոչ ունին մարդավարի ընտրելիք բաւականանան միմեանց կանդիկատաց հայհոյել և վատարանել: Մամուլն գոլով զեկալար հասարակական մտաց, ընդէր «Հօրիզոնն» ոչ ունի քաջութիւն զնիլ անւանքն ընտրելեաց իւր զՄեսրոպըն և զՊորէնն, իսկ «Մշակն» էր երկնչելով հայհոյանքէն նորա, ոչ տայ անունն Բագրատի և Կարապետի:

Մտաթէոս վարդապետի—ընդէր մարտընչիս ընդ հսկային, ոչ ապաքէն աչքն քո ոչ բարձր տեսանէ քան ոտքունքն Կարապետի և նա տեսանէ միայն գաղաթն քո. կամ ոչ ես ընթերցեալ առակըն Կոխովի:

Միաբանութեանն էջմիածնի—խաղաղութիւն ամենեցուն...

Եւ ամենեքեան դարձի եկեացեն և զիմեն առ Հայրն զոչելով «Մեղան յերկիրս և առաջի Քո»: Օրհնեալ էիք և օրհնեալ լինիլիք, ամէն:


Ճնդրիկ Արեղայ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ՊՐԻՆՏԵՐՆԻ
ՊՐԻՆՏԵՐՆԻ



Հայ ուսանողը փողոցում ֆէյաների հետ:




Ճապոնացի ուսանողը մեքենաների հետ զբաղված:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԻՐ ԵՆ Ց ՓՆՆ ԴԱՎԱՅՐՈՒՄ



Դառնում է չինոֆիկ, կաշառում է և վճարում դիմող թշառին



Հիմնում է գործարան և պատրաստում է բանորներ:

Բ Ա Լ Լ Ե Գ Ը

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԻՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Բ Բ Է Լ Ե Ն Ե Բ Ե Բ

(Ժամանակակից բանաստեղծո՛ր

թիւն)

Ուսուցիչ.—Արեղեան, հոլովիբ մայր դասը: Աշակերտ.—Ուղղական—մայր, տրական—մայր, հայցական...

Ուսուցիչ.—Նու, գգուժ, միթէ այդպէս է: Նստիր, չգիտես... Դու, Արուլեան, հոլովիբ նոյն բառը:

Աշակերտ.—Մայր, մայրի...

Ուսուցիչ.—Նու, նստիր, նստիր... Աւալեան, դու հոլովիբ...

Աշակերտ.—Նու, սատանան տանի ձեզ, խօսքը մէկ են արել, ի՛նչ է: Գէորգեան, դու հոլովիբ:

Աշակերտ.—Մայր, մայրի... այդ միջոցին բաց լուսամուտով փողոցում լսեց կինսոյի ձայնը, որ հայհոյելով մէկին ասում էր:

—Հա, բաս, քու մօր արևը գի...

Ուսուցիչ.—Լսեցիք, անպիտան ծոյլիբ, ի՞նչ լսեցիք, դէ այժմ իմացէք, որ քերականութեան մէջ կինսուն ձեզնից առաջ է:

Պ Ո Ս Տ Ա Ր Կ Ղ

Ա՛խ, չեչոտ աղջիկ, Ա՛խ կառչել ս՛

աղջիկ

Դու սիրուն արեւ Դու պայծառ երկինք. Ես սիրում եմ քեզ Ես աղօթում եմ քեզ...

Դու իմ պայծառ ուղեղի Հոյս հորիզոնում. Ես ամեն տեղ ու ամենուրէք Բեզ եմ որոնում...

Ա՛խ, մի րոպէ արի, Դու ինձ մօտ արի, Եւ տես թէ ինչպէ՛ս, Դու շիւ-կաղ աղջիկ

Դու սիրուն աղջիկ, Բթիս ծայրը խորապէս. Յաւում է սաստիկ, Յաւում է սաստիկ:

Դու արի ինձ մօտ ու զուրգորիք նրան. Ջերմ փայտայիր ու մարբիր նրան...

Ես կարօտ է քեզ, Ու քո դէմքին հեզ:

Բո աղէսի աչքերին հրաշակերտ Որ միշտ զրուցում են ցաւոտ թիս հետ...

Դու սեւ գիշերի պէս Սուսիկ ու փուսիկ, Բո քայլերով վէս Որպէս մի փիսիկ,

Արի ինձ մօտ Ու թիս ծայրը աննման, Որ քեզ է կարօտ— Ջերմ սիրով համբուրիք նրան:

Ա՛խ, չեչոտ աղջիկ, Դու սիրուն լուսին. Իմ քիթը սաստիկ Մնաց քո յուսին:

Ակուսի ծայնը ներդաշնակ, Իր թովչանքով հոգիս է դիվում. Եւ շիւ աչքերդ կապուտակ Իրենց զգանքով ինձ են փայծալում...

Յօգի-Սահճեցուն

Ալէքսանդրուպօլ. Բ.-ին.—Ձեր յօդածը քը- նատ էր, դբիլ ենք մահճակալ- զամբիւղի մէջ, որ քնից կըշ- տանայ:

Ղարս. Պ.-ին.—Ձեր յօդածի էլ ոտը փուշ էր մտել և կաղում էր: Ուղար- կեցինք բժշկի մօտ:

Էջմիածին. Մ. Գ.-ին.—Դուք ասում էք՝ ողկուրել եմ. շատ էլ լաւ էք ա- րել, բայց միայն գգոյ՜ կացէք, ձեզ «լիճը» չբցէք:

Երևան. Ե.-ին.—Հի, լէներից բղխած ա- տափների բշիջները երկունքի մէջ են: Եթէ դուք գոհացում չէք ստանում Երևանից, կարող էք ապահարզան տալ. էջմիածի- նը, փառք Աստծոյ, մօտ է:

Իզդիր. Արէլին.—Իզուր մի երկնչէք. ձեր իզդիրցիները այնպիսի մարդիկ են, որ դրանց երկիւղից հաւա- տացնում եմ ոչ մի խօլերա, կամ ժանտախտ չի համարձակի ոտք կոխել ձեր գիւղը:

Շուշի. Տիգրանին.—Ունայնութիւն ունայ- նութեանց. ձեր գրածքը հէնց այդ նպատակին ծառայեց: Գը- լուխներդ քորելով նոր բան ըս- տեղծագործեցէք. դուք անպայ- ման հանճար էք, միայն գրելն է պակասում ձեզ:



ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ ЖИВОПИСЦЕВА ВЪ Г. ОРЛѢ. ԾԵՂԳԻ ԶՈՐԹՈՒԿ. Գէորգի տրակը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. Խորովակի մէջ—5 մարդու համար—5 կոպ. Մի րուբլուց պակաս—չէ վաճառու: Ծանա- պարանմանի համար—30 կոպ.: Երբ րուբ- լուց անիլ ուղղին համապատասխան գինը մինչև 20 տոկոս, հասցէն. Օրբօլ քա- ղաք, Ծարկի Հորթուկ ժիբոպիցի:

Բացած է 1911 թ. բաժանորդագրուծին

Ն Ա Յ Ս

Դրական-Հասարակական շաբաթաթերթի (Երկրոյ սարի):

„ՆԱՅՍ“-ի բաժանորդագիրը.—Ն. Նախի- ջևանի, Ռաստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ռ. կէս տ.-2 ռ. 3 ամ.-1 ռ.: Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ռ., կէս տար.-2 ռ. 50 կ. և 3 ամ.-1 ռ. 50 կ.: Արտասահ. տար.-6 ռ. կէս տարին 3 ռ. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.:

Հասցէն՝ Нахичевань н.-Д. Въ редакцію армянск. журнала „ЛУЙСЬ“.

Խմբ.-հրատ. ԲԺ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ.

Բ Ժ Ի Շ Կ

Ե. Ի. Միևստեսնց


Ներքին և երեխայոց և ստամոք- սա-աղիքային հիւանդութիւնների, պրօֆ. MATHIEU-ի մասնագիտա- կան կլինիկայից Պարիզում: Ընդունելութիւնը առ. 9-11 ժ. երեկ. 5-7 ժ.: Ելիզաւետին- սկայա, 39: 100-68

Բ Ժ Ի Շ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ԼԵՆՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւն- ներ:

Ընդունում է հիւանդներ իր սեփ- տանը ամեն օր առաւ. 9-12 և երեկ. 6-9. Ելիզաւետեան փող. № 28. 00-69



ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԽԱՐԱԿԱ

Կոմպոզիցիաներ

Շ Ք Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ

1906 թ.	5 ռ.
1907 թ.	7 ռ.
1908 թ.	7 ռ.
1909 թ.	7 ռ.
1910 թ.	7 ռ.

Հին համարները հատով թիֆլիսում 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ.

Գրե՛ք «Սաթարալ»-ի գրասենյակին:

МАГАЗИЪ

Композиция

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Носителямъ менѣе двухъ лѣтъ

Постоянный большій выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжные принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣль и впрочѣе.

Имѣется также галантерейный

Отдѣлъ

00—34 М. А. КАЛТАКЯНЦЪ



Լ ա յ ս տ և ս ա լ

ԱՐԱՄ ՎԵՐԴՅԱՆԻ

ՄՕՐ ՀԱՐԱԿԱՆԻՔԸ

(Պ օ Լ մ ա)

Հանձնում է թիֆլիսի «Գիր» և «Փարոս» գրավաճառանոցներում. պահուսար հեղինակի մոտ:

Հասցեն՝ Ելիսավեթպոլ, учителю Араму Вердяну. 10—3

Ցանանկարով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք: մենք խոսք հուրդ ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայերէս ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ գեկտեմբերի 1-ից հրատարակոււմ է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՀԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ռ., կէս տարւանը 6 ռ. Սակայն «ՍՍԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետեւեալ գներով.

»ՍՈՒՐՀԱՆԴԱԿ« և »ԽԱԹԱԲԱԼԱ« միասին

Տարեկան 12 ռ. Երեք ամիսը 4 ռ. — կ.
Կէս տարին 7 ռ. Ամիսը 1 ռ. 50 կ.

Մեր հասցեն՝ Тифлисъ, редакция „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ՊԵՏՐՈՍԻ ՍՊԻՏԵԿԵՂԷՆԻ ԽՆՆՈՒԹ ԿԻՐՇԵՆՈՒՄԻ ԵՒ ՏԻՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

ՍԵՂՈՆԻ և ՄԱՍԱՐ ԱՏԱՑԻԱԾ

մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—առուական և արտա-տաճմանեան ֆաբրիկաներից: Բոլոր ապրանքները ձեռք են բերւած առաջին ձեռքից և նշանակւած են Շ Ա Տ Է Ժ Ա Ն Գ Ն Ե Ր Օտար քաղաքների պահանջները կատարոււմ են Հ Ո Ւ Տ Ե Փ Ո Յ Թ Ե Ի Ճ Շ Օ Ր Է Ն 00—2

ԹԻՓԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴԻՐՔՈՎ
ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՐԵՆԱՆԵՐ
ԽՐՕՄՕ - ԼԻՏՕԴԵՐԵՓԻՆ
Ա. Ի. ԲԻԽՈՎԻ
(ԵՐԱՅՄԵՆԻ ԵԱԿԵՍԱՍ.)
Գօ,օլիկակի պրոսպեկտ, տուն Օրոյեանի, տեղեֆոն № 433.

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատէր սուղների, որ վիճադրատունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակեց և աւելացաւ նոր կօնսուրու կցիայի և ամենամեծ դիրքի արագատիպ մեքենայով՝ իր բոլոր օժանդակիչ պարագաներով: Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատէրները կատարել շուտ, ճշտութեամբ եւ Ա.Ի.Բ. ԷՓԱՆ միւս վիճադրատներից: ցանկանալով վիճադրական գործը կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խճայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տիրակալին: Յոյս ունիմ, որ պ. պ. պատէր սուղները, առանց ուշադրութեան չեն թողնել վերեւ յիշածներս և կըպատեն ինձ իրենց պատէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կըընեմ բաւարարելու պահանջները:

20—12 Յարգանքներով—Ա. Ի. ԲԻԽՈՎ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մ Ա Շ Ի Ա Ն Վ Բ Ն Տ Ա Ն Ն Բ Բ



—Որ չեմ սիրում, ինչի հա օգի նման վրովս փաթաթարամ,
—Ո՛ւր ես գնում երեկոնցք թողած:

Billings